ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

(Ռուսիայի դարձի 1000-ամյակի առթիվ)

Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

Կիևյան Ռուսիայում 988 թ. քրիստոնեության ճանաչումը որպես պետական կրոն նպաստեց ռուս պետականության կազմավորմանը, գրագիտության տարածմանը, մշակույթի, դրականության և գիտության զարգացմանը։ Սույն իրողության կարևորությունն ընդգծեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը ԱՄՆ կատարած իր այցի օրերին (1987 թ. դեկտեմբերի 7—10)։ Մոսկովյան և Ամենայն Ռուսիայի պատրիարք Պիմենի և Ռուս ուղղափառ եկեղեցու Սինոդի անդամների հետ ս. թ. ապրիլի 29-ին Կրեմլում կայացած իր հանդիպման ժամանակ Մ. Ս. Գորբաչովը նշեց, որ Ռուսիայում քրիստոնեություն ընդունելու 1000-ամյակը «ստացավ ոչ միայն կրոնական, այլև հասարակական ու քաղաքական հնչեղություն, քանի որ այն հանդիսանում է կարևոր իրադարձություն հայրենի պատմության, մշակույթի, ռուս պետականության զարգացման դարավոր ուղիներում» («Իզվեստիա», 1988, մայիսի 1)։

ՅՈՒՆԵՍԿՈ-ի հատուկ բանաձևի համաձայն, հոբելյանական հանդիսություններ կայացան Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի ավելի քան 80 խոշորագույն քրիստոնեական կենտրոններում։ Դեռ մինչև տոնակատարությունները Կիևում, Մոսկվայում, Լենինգրադում տեղի ունեցան միջազգային եկեղեցական գիտական երեք կոնֆերանս, անցկացվեց գիտական նստաշրջանների մի շարք, այդ թվում նաև Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նախագահությամբ մայիսի 19—20-ը կայացած նստաշրջանը՝ ռուս և վրաց եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ ընթերցվեց Մոսկովյան և Ամենայն Ռուսիայի պատրիարք Պիմենի ողջույնի խոսքը, լսվեցին հայ գիտնականների զեկուցումները ռուս և հայ եկեղեցիների փոխադարձ կապերի մասին։ Հունիսի 10-ին ՍՍՀՄ Մեծ թատրոնի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ երկրի բոլոր եկեղեցիների, այդ թվում և հայ եկեղեցու ներկայացուցիչների ու արտասահմանյան հյուրերի մասնակցությամբ։ Հունիսի 14—16-ը տոնախմբությունները շարունակվեցին Կիևում, Վլադիմիրում, Լենինգրադում. Ռուս եկեղեցու տեղական և արտասահմանյան թեմերում։ Նշենք, որ այդ տարելիցը լայնորեն արտացոլվեց խորհրդային և արտասահմանյան թերթերում, ամսագրերում, ռադիոհաղորդումներում և հեռուստատեսությամբ։

Ո՞րն է Ռուսիայի դարձի 1000-ամյա տարելիցի այսպիսի լայն տոնակատարության պատճառը։

Այս հարցին համառոտ, բայց խորապես ճիշտ պատասխան տվեց Մշակույթի սովետական ֆոնդի նախագահ, համաշխարհային ճանաչում գտած գիտնական, Միջնադարի խոր գիտակ, ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչովը։ Նա նշեց, որ քրիստոնեության ընդունումը նպաստեց հին Ռուսիայի տարանջատված ցեղերի համախմբման և Ռուսիայի տարածքում միասնական պետության կազմավորման, ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների՝ մշակութային նոր, ավելի բարձր մակարդակի անցնելու, գիր ու հարուստ գրականություն ստեղծելու գործին։ Ըստ Դ. Ս. Լիխաչովի պատկերավոր արտահայտության, «քրիստոնեությունը գաղափարախոսություն չէ, լինի դա բուրժուա-

կան թե սոցիալիստական։ Դա աշխարհայացք է, որին գումարվում են կենցաղում ու կյանքում դրսևորվող բարոյաէթիկական նորմերը»[1]։

Քրիստոնեության ընդունումը հետագա տասնամյակներում էլ մեծ դեր կատարեց ռուս, ուկրաինական ու բելոռուս ժողովուրդների միասնության ամրապնդման գործում, ինչպես նաև այն բանում, որ Ռուսաստանը դարձավ մեծ տերություն, որը մի ձգողական կենտրոն հանդիսացավ բոլոր այն հավատակից երկրների համար, որոնք կեղեքված էին զավթիչների կողմից և որոնց թվում էր նաև Հայաստանը։

Տոնակատարությունը եղբոր տան մեջ տոն է նաև մնացյալ եղբայրների համար, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է հայտնել իր բերկրանքն ու «միացյալ ընտանիքի զգացումը»՝ տարբեր ձևերով ու միջոցներով։

Այդ միջոցներից մեկն էլ հանդիսանում է հիշողությունը մեկտեղ վերապրած օրերի ու աշխատանքի, ուրախության ու տխրությունների մասին՝ այսինքն այն ամենը, ինչից ծնվում է և՛ անհատ մարդու, և՛ ժողովուրդների կեցությունը։

* * *

Ռուսական տարեգրությունների մեզ հասած մի հնագույն հավաքածուի էջերում, որը վերնագրվել է «Повесть временных лет» և կազմվել է Կիևի Պեչերսկի՝ վանքի կուսակրոն Նեստորի կողմից, կա մի պատմություն այն մասին, թե ինչպե՞ս և ո՞ր պարագաներում քրիստոնեությունը ընդունվեց Ռուսիայում։ Մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչի (978—1015)[2] առջև ծառացել էր մի խնդիր՝ իր ավարտին հասցնել և ամրապնդել տարանջատ սլավոնական ցեղերի միացումը, ենթարկել նրանց Կիևյան իշխանապետությանը՝ մի գործ, որ սկսել էր իրագործել դեռ Օլեգը (882—912), շարունակել էին նրան հաջորդած Իգորը (912—945) և Իգորի կինը՝ Օլգան, նրանց որդի Սվյատոսլավը (965—972), ստեղծել միասնական կենտրոնացված պետություն, որը պիտի կարողանար դիմադրել «տարերկրյա զավթիչների ոտընձգություններին ու պահպանել իր ամբողջությունն ու անկախությունը։

Վլադիմիրի ձեռնարկած այս խնդրի իրագործման ճանապարհին խոչընդոտ էր հանդիսանում սլավոնական ցեղերի հավատալիքների տարբերությունը, հեթանոսական տարբեր աստվածությունների պաշտամունքը, որը փոխադարձաբար մեկուսացնում էր նրանց թե՛ գաղափարական և թե՛ հոգեկան առումով, թերևս հաճախ դառնում երկպառակությունների պատճառ ու թուլացնում Ռուսիան։ Գիտակցելով դա, Վլադիմիրը սահմանեց արևելասլավոնական ցեղերի աստվածությունների պաշտամունքի որոշակի ծիսակարգ։ Սակայն դրանով չհասավ իր նպատակին։ Հեթանոսությունն առաջվա պես տարանջատում էր Ռուսիայի տարբեր մասերը և իր էությամբ հակասում էր միասնական պետության գաղափարին։

Ըստ Տարեգրության տվյալների, 6494[3] (986) թ. Վլադիմիրին այցելեցին տարբեր կրոնների ներկայացուցիչներ, որոնք համոզում էին նրան ընդունել իրենց կրոնը։ Վերջինը հանդես եկավ մի հույն «փիլիսոփա», որը մանրամասնորեն շարադրեց սրբազան պատմությունն ու քրիստոնեական ուսմունքի հիմնական սկզբունքները, վերջում ցույց տալով մի նկար, որի վրա պատկերված էր Ա՛հեղ դատաստանը։ Սակայն Վլադիմիրը խուսափեց մկրտվելուց և ասաց. «դեռ կսպասեմ», ցանկանալով տեղեկանալ բոլոր հավատքների մասին»[4]։ Նա բոլոր երկրներն ուղարկեց «ընտրյալ մարդիկ»,

---

1 Предварительные итоги тысячелетнего опыта. Беседа с академиком Д. С. Лихачевым.—Огонек. 1988, № 10, с. 12.

2 Նշված են իշխան լինելու տարիները։

3 «Աշխարհի արարման օրից» մինչև նոր թվարկությունը (մինչ Քրիստոսի ծնունդը), ըստ Տարեգրության, 5508 տարի է։

4 Повесть временных лет, в 2 ч. Подгот. текста Д. С. Лихачева; пер. Д. С. Лихачева и Б. А. Романова, под ред. чл.-корр. АН СССР В. П. Адриановой-Перетц (այսուհետև՝ ПВЛ՝ մասի և էջի նշումով).

որոնք տեղերում ուսումնասիրելով տարբեր կրոններ, վերադարձան ու հայտնեցին, որ հունական կրոնը լավագույնն է, և Վլադիմիրը համաձայնեց։

Մեր էր Կիևի մեծ իշխանի ընտրության կանխորոշիչ գործոնը։ Կարելի է ենթադրել, որ հունականությունից հրաժարվելու պատճառն այն էր, որ այդ կրոնը, բացի նրանից, որ չէր համապատասխանում ռուս ժողովրդի կենցաղին ու բարքերին, մերկացնում էր Ռուսիան Արևմուտքի ու Արևելքի բոլոր երկրներից՝ մի բան, որ պիտի ունենար բազմաթիվ տհաճ հետևանքներ։ Իսլամը, որը VII դարում ծագել էր արաբների մոտ ու տարածվել Մերձավոր ու Միջին Արևելքում, իսկ ավելի ուշ նաև Հեռավոր Արևելքի, Հարավ-արևելյան Ասիայի ու Աֆրիկայի որոշ երկրներում, ուներ ռազմատենչ, նվաճողական բնույթ, համապատասխանում էր այդ կրոնը դավանողների քոչվոր ապրելակերպին, ոգեշնչում էր բոլոր իր սահմանումների ու ծեսերի խստիվ ու անշեղ կատարում, հետու էր ռուսներից ոչ միայն տարածքային առումով, այլև նրանով, որ չէր կարող համաձայնություն լինել խաղաղ աշխատանքով զբաղված և ռազմանհրաժեշտության միայն պաշտպանողական, ադատադրական կռիվներ մղող սլավոնների յայնահոգի էությանը։

Այլ էր քրիստոնեությունը։ Հիշատ է, 451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովում քրիստոնեության մեջ առաջացավ երկու ճյուղավորում. երկբնակությունը, որն ընդունում էր Քրիստոսի երկակի՝ աստվածային և մարդկային էություններ, և միաբնակությունը, որը ճանաչում էր նրա միայն աստվածային էությունը։ Հենց այս հանգամանքն էլ դարձավ Տիեզերական եկեղեցու պառակտման պատճառը. հունական եկեղեցին դարձավ ժողովում հաղթանակած երկբնակության կողմնակից (բաղկեդոնական), իսկ հայկականը, ասորականը և այլ եկեղեցիներ՝ միաբնակության կողմնակից (հակաքաղկեդոնական)։ Այս քրիստոսաբանական վեճերը տեղիք էին տալիս փոխադարձ մեղադրանքների, և սրանցից էլ ծայր առան տարբերությունները եկեղեցիների միջև, չնայած երկու ճյուղավորումն էլ ընթանում էին քրիստոնեական կրոնի հունով և հաճախակի համատեղ պայքարի ելնում ընդհանուր թշնամիների՝ այդ երկոքին ուրացողների՝ հերետիկոսների և անհավատների դեմ։

Զխորանալով քրիստոնեական ուսմունքի էության շարադրանքի մեջ, նշենք, որ այդ ուսմունքի կենտրոնում է մարդը, նրա բարոյական կատարելագործումը, փոխադարձ օգնության, բարու և գթասրտության կոչերը և դրա հետ մեկտեղ՝ հնազանդության, համբերության, չարին բռնությամբ չհակառակվելու, իշխանություններին ենթարկվելու քարոզը։ Իր գաղափարների իրականացման ու մարմնավորման, սկզբնական նեղ սահմաններից դուրս գալու, տարբեր երկրների ժողովուրդների լայն զանգվածների մեջ տարածվելու և համաշխարհային կրոններից մեկը դառնալու համար քրիստոնեությունը կարիք ուներ ստեղծելու համապատասխան հաստատություն՝ եկեղեցին և նրան սպասարկողների դասը՝ կղերը։ Սրանց հանդես գալու պահից, մանավանդ քրիստոնեությունը որպես պետական կրոն ճանաչելուց հետո, եկեղեցին միանգամայն փոխակերպվեց. նա սկսեց ծառայել շահագործող դասակարգերին, ինքն էլ դառնալով դրանց դասերից մեկը, գաղափարապես հիմնավորելով ու պաշտպանելով իրենց ընդհանուր շահերը։

Քրիստոնեական կրոնը տարածվեց և հաստատվեց Ասորիքում, Հայաստանում, Հռոմեական կայսրությունում, Արևմտյան Եվրոպայի երկրներում։ X դարի վերջերին, երբ Վլադիմիր Սվյատոսլավիչը տարբեր կրոններ էր «փորձում», քրիստոնեությունն իր հունական (երկբնակ) տարբերակով հանդես էր գալիս որպես մի կրոն, որն իշխող դավանանք էր Բյուզանդիայում, Արևմտյան Եվրոպայի երկրներում, Վրաստանում, ինչպես նաև հայերի որոշ մասի մոտ։

Քրիստոնեությունը Ռուսիա էր թափանցել դեռ Վլադիմիր Սվյատոսլավիչի իշխանության դլուխ անցնելուց առաջ։ Ինչպես հայտնում է «Повесть временных лет» ժողովածուն, նրա տատը՝ իշխանուհի Օլգան մի մեծ շքախմբի ուղեկցությամբ 955 թ. ճանապարհորդություն կատարեց դեպի Կոստանդնուպոլիս (Ցարգրադ)։ Նրան հանդիսավոր դիմավորեց և ընդունեց

կայսր Կոստանդին IV Ծիրանածինը (913—959), որը մտադրվեց ամուսնանալ նրա հետ։ Համաձայն տարեգրողի ըստ ամենայնի առասպելական պատմվածքի, Օլգան ավելի խորամանկ գտնվեց։ Ցանկանալով դառնալ քրիստոնյա, նա խնդրեց Կոստանդինին իր կնքահայրը լինել։ Եվ երբ դրանից հետո Կոստանդինն ամուսնանալու առաջարկ արեց, Օլգան առարկեց. «Ինչպե՞ս ես դու ցանկանում ինձ կին վերցնել, երբ դու ինքդ ես ինձ կնքել ու դուստր անվանել»[5]։ Այնուհանդերձ այն փաստը, որ Օլգան քրիստոնեություն ընդունեց ու մկրտվեց Հելենա անունով, պետք է ստույգ համարել[6]։ Բացի Օլգայից, Ռուսիայի դարձից դեռ կես դար առաջ քրիստոնյա է եղել իշխանական ջոկատի (դրուժինայի) մի մասը, որին սպասարկելու համար Կիևում կար Եղիա մարգարեի եկեղեցին։ Երբ Իգորը 943 (կամ 944) թ. պայմանագիր էր կնքում Բյուզանդիայի հետ, նրա ջոկատի այդ մասը երդվում էր Քրիստոսի անունով, մյուսները՝ Պերունի[7]։

Ռուսիայում քրիստոնեության վաղ տարածման մասին ուշագրավ միտք է արտահայտել Կիևի Ս. Սոֆիայի վանքի ավագ երեց Լեբեդինցևը 1881 թ. Թիֆլիսում կայացած հնագետների 5-րդ համագումարում։ Նշելով, մի կողմից, քրիստոնեության արագ տարածումը Ռուսիայի հյուսիս-արևելքում՝ Վլադիմիրի օրոք, մյուս կողմից, քրիստոնեության ըմբռնման մի շարք տարբերությունները, որոնք առկա էին այդ երկրամասի բնակիչների և հարավ-արևմտյան ռուս եկեղեցու միջև, միաժամանակ հիշատակելով, որ Ռուսիայի հյուսիս-արևելքում երևան եկան մի շարք աղանդներ ու հերձվածներ, որոնք չկային հարավ-արևմտյան Ռուսիայում, Լեբեդինցևը առաջ է քաշում մի վարկած, որի համաձայն «քրիստոնեությունը մուտք էր գործում հյուսիս-արևելյան Ռուսիա կուսակ ոչ միայն Կիևից և ոչ էլ Կիևյան միտրոպոլիտի կողմից այստեղ ուղարկված եպիսկոպոսների ժամանումից հետո. սրանց նախորդել էին քարոզիչներ, որոնք չէին տեսել ո՛չ Կիևը, ո՛չ էլ Ցարգրադը։ Հիմնավորելով իր տեսակետը, Լեբեդինցևը մատնանշում է Վոլգայի նշանակությունը հյուսիս-արևելյան Ռուսիայի համար՝ որպես ջրային ուղու, որով կապ էր հաստատվում վրաց և հայոց եկեղեցիների հետ, իսկ նրանց միջոցով էլ՝ Անտիոքի և Ալեքսանդրիայի, ինչպես նաև Բյուզանդիայից Կովկաս աքսորված հերետիկոսների տարբեր բնակավայրերի հետ։ Այս կապակցությամբ մի հարց է ծագում. «Չկա՞ն, արդյոք, Կովկասում պատմական հետքեր, որոնցից երևար, որ Կովկասի քրիստոնյաները աղդել են քրիստոնեության լույսով հյուսիս-արևելյան Ռուսիան լուսավորելու վրա և որ վրաց ու հայոց եկեղեցիները հյուսիս-արևելյան Ռուսիա են ներմուծել իրենց որոշ առանձնահատկությունները, որոնք չենք նշմարում ռուսական հարավային թեմերում»[8]։

Ըստ հայ պատմիչների տեղեկությունների, Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը IV դարի սկզբին քարոզչական գործունեություն էր ծավալել Արցախում, Ատրպատականում, «հյուսիսային ժողովուրդ» մազքութների երկրում, իսկ հետագայում՝ IV դարի վերջերին այդ գործունեությունը շարունակեց Մեսրոպ Մաշտոցը՝ Աղվանքում, իսկ մյուս հայ քարոզիչները՝ հոների ու խազարների տարածքում՝ ընդհուպ մինչև X դարի առաջին կեսը։

---

5 ПВЛ, ч. I, с. 242.

6 М. В. Левченко. Очерк по истории русско-византийских отношений. М., 1956, с. 222—253. Գ. Օստրոգորսկին այն կարծիքին է, թե Օլգան մկրտվել է Կիևում և ժամանել է Կոստանդնուպոլիս արդեն քրիստոնյա դարձած (տե՛ս G. Ostrogorsky. L'expedition du prince Oleg contre Constantinople en 907. — Seminarium Kondakovianum, 1940, № 11.

7 Н. М. Никольский. История русской церкви. М., 1985, с. 21—22.

8 Մեջբերվում է ըստ՝ А. Д. Ерицов. Первоначальное знакомство армян с Северо-Восточной Русью до воцарения дома Романовых в 1613 г.—Кавказский вестник, Тифлис, 1901, № 12, с. 52—53.

Այս ենթադրություններն անհիմն չեն, և մի շարք գիտնականներ ազդեցության հետքեր են գտնում եկեղեցական ճարտարապետության բնագավառում։ Մասնավորապես, նշենք Հ. Խ. Խալփախչյանի «Հայ-ռուսական մշակութային հարաբերությունները և դրանց արտացոլումը ճարտարապետության մեջ» (Երևան, 1957) և «Վլադիմիր-Սուզդալյան Ռուսիայի և Հայաստանի մշակութային կապերը» (Մ., 1977) աշխատությունները, որոնցից վերջինում խոսելով ռուս և հայ արվեստի հուշարձանների նմանության և XI—XIII դդ. հայ և ռուս վարպետների՝ ճարտարապետների ու նկարիչների փոխադարձ կապերի մասին, հեղինակը մատնանշում է նախ փորձի երկկողմանի փոխանակման, երկրորդ՝ այլ ժողովուրդների գեղարվեստական մշակույթի տարրերը հայերի և ռուսների կողմից վերամշակելու փաստերը (էջ 67—68), այսինքն հեղինակի կողմից տրվում է ծայրաստիճան զգույշ և, մեր կարծիքով, ճշմարիտ բացատրություն դիտվող երևույթների վերաբերյալ։

Ակնհայտ է, որ Լեբեդինցևի կողմից առաջադրած հարցին պատասխանելու համար հարկավոր է կատարել հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան ռուս եկեղեցիների աստվածաբանական վեճերից ծնունդ առած տարբերությունների հատուկ հետազոտություն, քրիստոնեական դոգմաների մեկնաբանման և մի կողմից հյուսիս-արևելյան, մյուս կողմից հայ և վրաց եկեղեցիների ծիսակատարությունների ու սովորույթների համադրություն և այլն։

Այսպիսով, ակնհայտ է, որ Վլադիմիր Սվյատոսլավիչի օրոք քրիստոնեությունն արդեն թափանցել էր Ռուսաստան և արմատներ թողել ռուս ժողովրդի կյանքում։ Զգալիորեն ավելացավ քրիստոնյաների քանակը նաև հենց Վլադիմիրի ջոկատում (դրուժինայում)՝ մի փաստ, որը մեծ իշխանը չէր կարող հաշվի չառնել։

Մեկ անգամ ևս ընդգծենք, սակայն, որ կարևորն այն էր, որ քրիստոնեությունը, որպես մոնոթեիզմ (միաստվածություն), ոչ միայն հանդիսանում էր Կիևյան իշխանապետության շուրջ Ռուսիայի համախմբման ու միավորման խնդրի լուծման ուղի, որը հիմնվելու էր ընդհանուր գաղափարախոսական հիմքերի վրա, այլև մերձեցնում էր Ռուսիան բոլոր տեսակետներից առավել զարգացած երկրներին և հաղորդակից դարձնում վերջիններիս մշակույթին ու հոգևոր կյանքին։ Հեթանոսության համեմատ այն հանդիսանում էր աշխարհի միասնության, երևույթների, համընդհանուր կապերի, այդ թվում մարդկության ու նրա պատմական զարգացման ավելի խոր ըմբռնում։ Այն առաջ քաշեց նոր բարոյաէթիկական նորմեր, նպաստելով անհատական և հասարակական հարաբերությունների կատարելագործմանը, ավելի լայն ճանապարհ բացեց դեպի գիրն ու գրականությունը, դեպի բյուզանդական մշակույթը, որը անտիկ քաղաքակրթության ժառանգորդն էր և այլն։

Իհարկե, եկեղեցին Ռուսաստանում (ինչպես և մյուս երկրներում) իշխող դասակարգի ձեռքում դարձավ աշխատավոր զանգվածների ճնշման և հնազանդեցման միջոց, սակայն նույն եկեղեցին հանդիսացավ լուսավորություն տարածող, մշակույթի բոլոր բնագավառների զարգացման գործոն, հայրենասիրության ու բարոյականության դաստիարակիչ։ Ականավոր ռուս պատմաբան Վ. Կլյուչևսկին ճշմարտացիորեն ընդգծել է, որ Հին Ռուսաստանում «լավագույն զգացմունքների ու մտքերի վայրը եկեղեցին էր։ Այնտեղ էր մարդը տանում իր միտքն ու բանականությունը»։ Եկեղեցիներին ու վանքերին կից բացվում էին դպրոցներ, ստեղծվում էին պատմական, բարոյախոսական, գեղարվեստական և այլ ստեղծագործություններ, թարգմանվում էին համաշխարհային գրականության հուշարձաններ։ Վլադիմիր Սվյատոսլավիչն իր ընտրությունը կատարեց, քաջ գիտակցելով քրիստոնեության նշված դրական կողմերը։

Քրիստոնեության ընդունումը հանգեցրեց Բյուզանդիայի հետ Կիևյան Ռուսիայի ունեցած առևտրական, դիվանագիտական և այլ կապերի ուժեղացմանը, երկու երկրների մերձեցմանը, որին նպաստում էր նաև նրանց սոցիալական էության և քաղաքական կառուցվածքի նմանությունը, մի փաստ,

որը նույնպես մեծ չափով կանխորոշեց «հունական հավատքի» ընտրությունը Կիևի մեծ իշխանի կողմից։

Մի կողմ թողնելով Ռուսիայի դարձի մյուս՝ ոչ այնքան էական առավելությունները, շեշտենք, որ այն կենսականորեն կարևոր հետևանքներ ունեցավ ոչ միայն ռուս ժողովրդի, այլև նրա հետ իրենց պատմական ճակատագիրը կապած այլ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի համար։

Նշենք, որ քրիստոնեության ընդունումը Ռուսիայում երկուստեք սուր բնույթ էր կրում. մի կողմից այն մղում էր նոր դարձի եկած ժողովրդին դեպի բյուզանդական դարդացած մշակույթը, եկեղեցու միջոցով ամրապնդում էր Ռուսիայի քաղաքական իշխանություններն ու հասցնում Բյուզանդիայի մակարդակին՝ մի բան, որ կենսական կարևորություն ուներ երիտասարդ ֆեոդալականացող պետության համար։ Մյուս կողմից, նույն փաստը սպառնում էր զրկել Ռուսիան ինքնուրույնությունից, դարձնել կայսրության նահանգ[9]։ Սրա հետ մեկտեղ, ավանդույթի համաձայն, քրիստոնեությունը հունական եկեղեցուց ընդունելու պայմաններում ռուս եկեղեցին կախվածության մեջ էր ընկնում հունականից։ Իսկ դա Բյուզանդիայի կայսերական իշխանության քաղաքական կարգի հավակնությունների պատճառ էր դառնում։

Բյուզանդական կայսրերի համաշխարհային միապետական իշխանության և բոլոր քրիստոնյաների վրա գերիշխելու այս հավակնությունը ակնհայտորեն արտահայտվեց Բալկանների և Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և Հայաստանի ճակատագրում՝ Վասիլ II-ի օրոք (976—1025)։ Նա, ինչպես և Բյուզանդիայի մյուս կայսրերը, ընդհուպ մինչև Թուրքերի կողմից 1453 թ. գրաված Կոստանդնուպոլսի անկումը, իրեն համարում էր ոչ միայն պետության, այլև եկեղեցու գլուխ, Կոստանդնուպոլսի պատրիարքին դիտելով որպես իր ողնսկան եկեղեցական գործերում, ուստի գտնում էր, որ բոլոր քրիստոնյաներն էլ հավասար են իր հպատակներին։ Նրանք պարտավոր էին հետևել հռոմեական օրենքներին և այդ հանգամանքը նոր դարձի եկած ժողովուրդներին կայսրությունից կախման վիճակում էր պահում, իսկ եկեղեցու առջև խնդիր էր դրվում անշեղորեն կատարել այդ օրենքները։ Պատահական չէ, որ «բարբարոս» ժողովուրդների դարձի ժամանակ հունական եկեղեցու գլխավոր պահանջներից մեկն էր իր միտրոպոլիտի և եպիսկոպոսների նշանակումը, որոնք պիտի հանդիսանային կայսերական քաղաքականության միջնորդներ։

Ակնհայտ է, որ Վլադիմիր Սվյատոսլավիչը խորապես գիտակցում էր քրիստոնեության հունական տարբերակի ընդունման ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքները Ռուսիայի համար։ Նրա հեռատեսությունն ու իմաստությունն արտահայտվեցին այն բանում, որ նա իսկույն քայլեր ձեռնարկեց, որոնք պայմանավորեցին ռուս եկեղեցու ինքնուրույնությունն ու առանձնացումը բյուզանդականից և Կիևյան պետության անկախությունը՝ Բյուզանդիայից։ Որպես քրիստոնեության հունական տարբերակի ընդունման պայման Վլադիմիրը Բյուզանդիայում իշխող հայ հարստության ներկայացուցիչ կայսր Վասիլ II-ին մի պահանջ ներկայացրեց. ամուսնացնել իր հետ կայսեր քրոջը՝ ազգությամբ հայ Աննային։ Հիշենք, որ Միջնադարում որպես վճռորոշ հանգամանք էր հանդես գալիս մարդու ոչ թե էթնիկական, այլ կրոնական պատկանելությունը։ Այսպես, հին ռուսական հեղինակները «հույն» էին անվանում բյուզանդական եկեղեցու բոլոր հետևորդներին, «հայ» անվանվում էին միայն հայոց ազգային եկեղեցու հետևորդները։ Այդ պատճառով, չնայած նրան, որ Վասիլի ու Աննայի ծագումը հայկական էր, այնուամենայնիվ ըստ իրենց դավանանքի նրանք համարվում էին հույներ։

Վլադիմիրի ամուսնությունը բյուզանդական կայսեր քրոջ հետ, համաձայն ծագման հնամենիության վերաբերյալ այն ժամանակ ընդունված

---

[9] Д. С. Лихачев. Русские летописи. М.—Л., 1947. с. 44.

պատկերացումների. չէր կարող համարվել իրավահավասար ամուսնություն, և համաձայնությունը կնշանակեր բյուզանդական կայսեր բոլոր իրավունքները ճանաչել նաև որպես Կիևի մեծ իշխանի իրավունքներ՝ մի հանգամանք, որին ամեն կերպ դիմադրում էր Վասիլը։ Սակայն բարդացած ներքին իրավիճակը Բյուզանդիայում՝ իշխող դասակարգի տարբեր խմբավորումների պայքարը իշխանության համար, Վասիլ II-ի ջախջախիչ պարտությունը բուլղարների հետ ունեցած պատերազմում, Վարդ Փոկասի ընդվզումը Ասիայում, այս ամենը Վասիլին ստիպեց 986 թ. օգոստոսին շտապ դեսպաններ ուղարկել Կիև, Վլադիմիրի մոտ, օգնության խնդրանքով։ 987 թ. վերջերին—988 թ. սկզբներին Վլադիմիրը Վասիլի տնօրինության տակ ուղարկեց մեծ հազարանոց ռուս ջոկատ (դրուժինա), որը կռվելով բյուզանդական զորքի կազմում, ջախջախեց ապստամբներին Կոստանդնուպոլսի մոտակայքում, որից հետո ուղարկվեց Հայաստան և Վրաստան։ XI դարի հայ պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը[10], որը բազմիցս հիշատակում է ռուսներին, անվանելով նրանց «ռուզ», հայտնում է Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում, Հայաստանում ու Իվերիայում մղվող պատերազմներում և դրա հետ կապված իրադարձություններում այդ դրուժինայի ունեցած մասնակցության մասին[11]։ XI դարի հայ պատմիչ Արիստակես Լաստիվերցին իր գրքի առաջին գլխում այդ դրուժինայի մասին գրում է, որ Վասիլի գահակալության քսանհինգերորդ տարում նա մեծ ուժերով, որոնց թվում կային և «հոուզներ», եկավ Եփրատի վերին հոսանքում գտնվող Եկեղյաց գավառ, որտեղ նրան միացան և հայերը՝ «աղատները», այսինքն արտոնյալ խավերի ներկայացուցիչներ Տայք գավառից (զօրքն Տայոց), որը Վերին Հայքի 14-րդ նահանգն էր։ Հետագայում Վասիլը առատորեն պարգևատրեց նրանց, հաստատեց նրանց սեփականատիրական իրավունքներն ու բարձրաստիճան տիտղոսները։

Սակայն, ինչպես գրում է Լաստիվերցին, Վասիլ II-ը խախտեց իր խոստումը՝ պահպանել հայոց թագավորությունները։ 1021 թ. նա գրավեց Վասպուրականի Արծրունիների տիրությունները, Սենեքերիմ թագավորին զորքի ու բնակչության մեծամասնության հետ գաղթեցրեց Փոքր Հայք, որը կայսրության կազմի մեջ էր մտնում, իսկ հետագայում Վասիլ II-ի ժառանգորդը կայսրությանը միացրեց նաև Անի-Շիրակի Բագրատունիների մայրաքաղաքը (1041 թ.)[12]։

Մի կողմ թողնելով ռուս դրուժինայի հետագա ճակատագիրը, վերադառնանք Վասիլ II-ին։ Թեև հենց Վլադիմիր Սվյատոսլավիչի օգնությամբ նա ջախջախեց իր հակառակորդ Վարդ Փոկասի զորքը և ամրացավ բյուզանդական գահի վրա, նա ամեն կերպ ձգձգում էր Աննայի մեկնումը Ռուսիա։

Նշենք, որ Վլադիմիր Սվյատոսլավիչի անվան և Ռուսիայում քրիստոնեությունը ընդունելու շուրջ ստեղծվել են բազմաթիվ ժողովրդական ավանդություններ, վարքեր, գրառություններ տարեգրություններում, որոնք զգալի չափով դարձել են աղբյուրներ «Повесть временных лет» ժողովածուի համար։ Վերջինիս մեջ Նեստորի կողմից ներմուծվել է նաև այսպես կոչված «Կորսունյան առասպելը» Վլադիմիր Սվյատոսլավիչի՝ 988 թ. գարնանը (հնարավոր է ամռանը կամ աշնանը) դեպի Կորսուն-Խերսոնես ձեռնարկած արշավանքի մասին, որը հանդիսանալով կայսրության կարևորագույն ամրակետը, արգելակում էր ռուսների առաջխաղացումը դեպի Սև ծովի հարավային ափերը և փակի տակ էր պահում Դնեպրի գետաբերանը։ Այդ արշավանքը կոչված էր ցուցադրելու երիտասարդ Կիևյան պետության ուժը և ստիպելու, որ մեծամիտ ու գոռող Վասիլը հաշվի նստի իր հետ։

---

10 Տե՛ս В. Г. Васильевский. Варяжско-русская и варяго-английская дружина в Константинополе в XI—XII веках; Он же. Труды. СПб., 1908. т. I, с. 200—203.

11 Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 183—184։

12 Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերցւոյ. Երևան, 1968, էջ 22—23, 34, 57։

Կորսունը միանգամից գրավել չհաջողվեց, բաղարի բնակիչները համառորեն պաշտպանվում էին և վտանգ կար, որ պաշարումը կձգձգվի, եթե Անաստաս (Նաստաս) անունով մի ոմն այր Վլադիմիրի կողմը չարձակեր իր նետը՝ մի գրությամբ. «Փորիր և փակիր ջրի ճամփան, որը խողովակներով գալիս է ցրամբարներից, որոնք գտնվում են բո հետ, արևելյան կողմում»։ Վլադիմիրը, իմանալով այդ, նայեց երկնքին ու ասաց։ «Եթե դա իրականանա, մկրտվելու եմ»[13]։

Մտորումների ակիր է տալիս այն քայլը, որին դիմեց Կորսունցի Անաստասը, օգնելով ռուսներին տվելի արագ նվաճել քաղաքը՝ վարմունք մի մարդու, որն ի տարբերություն համառորեն պաշտպանվող հույների, ընդհակառակը՝ շահագրգռված էր հանձնվել, և այդ հանգամանքը վկայում է, որ նա պատկանում էր հույներին թշնամաբար տրամադրված ազգության։ Անաստասը քաղկեդոնական էր, հոգևոր անձ, և դա երևում է «Повесть временных лет» գրքում բաց թողնված, բայց Նիկոնյան տարեգրության մեջ պահպանված և 6498 թ. նշված տեղեկությունից, որտեղ ասված է նովգորոդցիների դարձի և, ինչպես ցույց կտանք հետագայում, Կիևի եկեղեցական շինարարության գործում նրա ունեցած մասնակցության մասին։

Ըստ Նեստորի հետագա շարադրանքի, Վլադիմիրը կայսր Վասիլին և նրա կառավարչակից ու եղբայր Կոստանդին VIII-ին (976—1023) հղեց հետևյալ լուրը. «Ահա գրավեցի ձեր փառապանծ քաղաքը։ Իսկ լսել եմ, որ դուք ունեք կույս քույր, եթե նրան չտաք ինձ որպես կին, ես ձեր մայրաքաղաքի հետ էլ կվարվեմ այնպես, ինչպես վարվեցի այս քաղաքի հետ»[14]։

Վասիլն ու Կոստանդինը առաջ քաշեցին մի պահանջ, որի համաձայն Վլադիմիրը պիտի հրաժարվեր հեթանոսությունից ու ընդուներ քրիստոնեությունը, և ստացան Վլադիմիրից հետևյալ պատասխանը. «Ասացեք ձեր թագավորներին այսպես. Ես մկրտվում եմ, քանզի դեռ սրանից առաջ եմ փորձել ձեր օրենքը և հավանել ձեր հավատն ու ժամերգությունը, որոնց մասին ինձ պատմել են ձեր կողմից ուղարկված այրերը»[15]։

Կայսրերը կրկնեցին իրենց պահանջը՝ նախ մկրտվել, որից հետո նրանք կուղարկեն իրենց քրոջը։ «Իսկ Վլադիմիրը պատասխանեց. «Եկեք ձեր քրոջ հետ ու մկրտեք ինձ»։ Եվ այդպես էլ արեցին թագավորները, և ուղարկեցին իրենց քրոջը. մեծատոհմիկ անձանց և պրոսվիտերներին»[16]։

Աննան չէր համաձայնում ամուսնանալ Վլադիմիրի հետ, սակայն եղբայրները համոզեցին նրան, շեշտելով, որ նա իր այդ ամուսնությամբ կըփրկի հույների երկիրը սոսկալի պատերազմից. «Տեսնո՞ւմ ես, որքան չարիք բերեց հույներին Ռուսիան։ Իսկ այժմ, եթե չգնաս, նրանք մեզ հետ էլ կանեն նույնը, ինչ արեցին Կորսունի հետ»[17]։

Վլադիմիր Սվյատոսլավիչի կողմից Խերսոնեսի գրավումը որպես ստույգ փաստ է ճանաչվել պատմաբան գիտնականների մեծամասնության կողմից, սակայն տարեգրության շարադրանքում առկա են մի շարք մանրամասնություններ, որոնք առաջ են բերում վեճեր ու կասկածներ։ Այսպես, համաձայն ակադեմիկոս Ա. Ա. Շախմատովի ուսումնասիրությունների, տարեգրությունների հնագույն ժողովածուի էջերում (1037 կամ 1039 թ.) ասված է, որ Վլադիմիր Սվյատոսլավիչը մկրտվել է Կիևում «Հույն փիլիսոփայի» ճառից անմիջապես հետո, իսկ դեպի Կորսուն իր արշավանքը կատարելիս, 989 թ., նա արդեն քրիստոնյա էր[18]։ Որպես առանձին ստեղծագործություն

---

13 ПВЛ, ч. I, с. 274.

14 Նույն տեղում, էջ 275։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։

18 А. А. Шахматов. Разыскания о древнейших русских летописных сводах. СПб., 1908; Տե՛ս նաև՝ А. О. Попов. О причинах похода Владимира Святославича на Корсунь в 988—989 гг.—Вестн. МГУ, История, 1978, № 2.

դություն ուներ նաև մի ավանդություն՝ Վլադիմիրի Կորսունում մկրտվելու մասին։ Նեստորը երկու տարբերակից նախընտրեց վերջինը, որը նրան հնարավորություն էր ընձեռում ես մեկ անգամ շեշտել Բյուզանդիայից Ռուսիայի անկախությունը, նրա հզորությունը, որն էլ ստիպեց հույներին կատարել Կիևի մեծ իշխանի պահանջները։ Ընդգծելու համար այն միտքը, որ քրիստոնեության ընդունումը նախանշված էր ռուս ժողովրդի համար արդեն նրա ծագման ժամանակներից, ռուս հեղինակն իր տարեգրության մեջ ներմուծում է մի պատմություն, թե ինչպես է Պետրոս առաքյալի եղբայր Անդրեաս առաքյալը այցելում Ռուսաստան։ Նա Սինոպից գալիս է Կորսուն, բարձրանալով Դնեպրն ի վեր, գիշերում լեռների ստորոտներում, իսկ արթնանալիս ասում է իր աշակերտներին. «Տեսնո՞ւմ եք այս լեռները։ Այս լեռների վրա կշողա Աստծու շնորհը, կկանգնի մի մեծ քաղաք և Աստված վեր կիսոյացնի բազում եկեղեցիներ»։ Ու բարձրացավ այդ լեռներն ի վեր, օրհնեց դրանք, խաչ տնկեց ու աղոթեց Աստծուն ու իջավ սարից, որի վրա հետագայում առաջացավ Կիևը, ու գնաց Դնեպրն ի վեր»[19]։

Մեկնաբանելով այս հատվածը, ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչովը իրավացիորեն գտնում է, որ թեև Անդրեաս առաքյալի Ռուսիա այցելելու մասին պատմվածքը չի համապատասխանում իրականությանը, միևնույն ժամանակ այն չի կարող համարվել ռուս տարեգրողի հնարանք։ Համաձայն «Վարք Առաքելոց»-ի, իր երրորդ ճանապարհորդության ժամանակ (իսկ քրիստոնեությունը տարածելու նպատակով առաքյալների կատարած ուղևորությունները հաստատվում են նաև պատմագրական աղբյուրներով) Անդրեասն այցելել է Սինոպիան ու Սև ծովի ափին գտնվող հունական գաղութ Կորսունը։ Այդ համոզմունքը տարածված էր Բյուզանդիայում XI դարում. և այդ մասին իշխան Վսեվոլոդ Յարոսլավիչին գրել է բյուզանդական կայսր Միքայել VII Դուկասը. «Ավետարանական նույն քարոզիչները հռչակեցին քրիստոնեությունը երկու ժողովրդի մեջ»։

Տարեգրության միտումի էությունն այն է, որ Ռուսիան ընտրեց «հունական հավատը»՝ քրիստոնեությունը. բայց ոչ իբրև ողորմածություն, որը ինչ-որ բանի կպարտավորեցներ նրան, այլ Աստծուց՝ Քրիստոսի աշակերտ, առաքյալ Անդրեասի միջոցով, և այդ հանգամանքն էր, որ ռուս եկեղեցու հիմնադրման հենց առաջին պահից հաստատեց նրա ինքնուրույնությունը և հունականին հավասար լինելու փաստը։ Ռուս եկեղեցու հետագա զարգացման ընթացքում այդ գաղափարը դարձավ հիմք, որով մերժվում էին ռուս եկեղեցին ղեկավարելու հունական եկեղեցու հավակնությունները, հույների փոխարեն առաջ էին քաշվում սեփական՝ ռուս միտրոպոլիտներ, այնուհետև՝ պատրիարքներ։ Եվ նույն այդ գաղափարն էր, որ 1453 թ. Բյուզանդիայի անկումից հետո ծնունդ տվեց այն տեսությանը, որով Մոսկվան հռչակվում էր «երրորդ Հռոմ», այն է՝ Բյուզանդիայի և նրա համաշխարհային միապետական ու եկեղեցական իշխանության անմիջական ժառանգորդը, մի տեսություն, որը մեծ նշանակություն ունեցավ ոչ միայն ռուս, այլ նաև մյուս ժողովուրդների ճակատագրի համար, այդ թվում և հայ ժողովրդի։

Սակայն վերադառնանք Վլադիմիր Սվյատոսլավիչին։ Աննայի ժամանումից հետո «Աստծու կամքով» Վլադիմիրի աչքերը հիվանդացան, որի հետևանքով նա կորցրեց տեսողությունը։ Հիվանդությունից ազատվելու համար Աննան խորհուրդ տվեց շտապ մկրտվել, և Վլադիմիրին կնքեցին Կորսունի եպիսկոպոսը և թագուհու քահանաները Սուրբ Վասիլի եկեղեցում, որից հետո նա անսպառելիորեն ապաքինվեց։ Նրա հետ մեկտեղ իր դրուժինան էլ ընդունեց քրիստոնեությունը։ Եվ այդ ժամանակ նրա մոտ եկեղեցի «բերեցին թագուհուն՝ ամուսնություն կատարելու համար»[20]։

Այնուհետև տարեգրողը շարունակում է. «Իսկ նրանք, ովքեր չգիտեն ճշմարտությունը, ասում են, թե Վլադիմիրը մկրտվել է Կիևում, իսկ մյուսները ասում են՝ Վասիլևում, երրորդները՝ ուրիշ կերպ են ասում»[21]։

19 ПВЛ, ч. I, с. 208.

20 Նույն տեղում, էջ 276։

21 Նույն տեղում։

Քրիստոնեության ընդունումը Ռուսիայում (ինչպես նաև Աննայի ու Վլադիմիրի ամուսնությունը) լայն արձագանք գտավ հետու Հայաստանում։ Արդեն հիշատակված Ասողիկը, Հայաստանում ռուս դրուժինայի գործողությունները նկարագրելիս, դրի է առնում, որ կայսր Վասիլը համաձայնեց իր քրոջն ամուսնացնել Վլադիմիրի հետ, որից հետո ավելացնում է. «Յորում ժամանակի՝ և հավատացին նորա (ռուսները—Դ. Ա.) ի Քրիստոս»[22]։

Հանձնելով Կորսունը հույներին որպես թագուհու փրկագին, իր հետ վերցնելով Աննային, Անաստասին, վանականներին, սրբերի նշխարներ, եկեղեցու սպասք ու սրբապատկերներ, երկու պղնձե կուռք ու չորս պղնձե նժույգ, լեռան վրա եկեղեցի կառուցելուց հետո Վլադիմիրը մեկնեց Կիև։

Աննային ուղեկցում էին միտրոպոլիտ Միխայիլը, եպիսկոպոսներ ու վանականներ, որոնց թվում կային նաև քաղկեդոնական հայեր՝ հունական եկեղեցու հետևորդներ, որի պատճառով նրանք էլ էին կոչվում «հույներ»։

Տարեգրության համաձայն Ռուսիայի դարձը կայացավ 988 թ.։ Ինչպես արդեն ասվեց, այն համեմատաբար հեշտությամբ անցկացվեց մեծ իշխանի շրջապատում, ուր մտնում էին նրա դրուժինան և բոյարները, սակայն ավելի մեծ դժվարությամբ՝ հասարակ ժողովրդի մեջ։ Նույն Կիևում քաղաքի բնակիչներին՝ «թե՛ հարուստ լիներ, թե՛ աղքատ ու խեղճ, թե՛ աշխատավոր», քշեցին դեպի Դնեպր ու գետի ջրերում էլ մկրտեցին։ Հին հեթանոսական աստվածները գահավեժ եղան, իսկ ղլիավոր հեթանոսական աստծուն՝ Պերունին գետը գցեցին և ուղեկցեցին մինչև սահանքները»[23]։

Դիմաղրություն ցուցաբերեցին նովգորոդցիները, որոնց «Պուտյատան ենքել էր սրով, իսկ Դոբրինյան՝ հրով։ Դիմաղրում էին նաև Ռոստովի բնակիչները, որի պատճառով այնտեղ ուղարկված երկու եպիսկոպոս փախուստի դիմեցին՝ «չհանդուրժելով մարդկանց անհավատությունն ու վրդովմունքը», երրորդի դեմ սկսվեց մի խռովություն, ու միայն չորրորդին՝ Իոայային հաջողվեց «կուռքերը հրին մատնել» և հաստատել նոր կրոնը[24]։

Ըստ նովգորոդյան IV տարեգրության 6499 (991) թ. նշված տեղեկության, Վլադիմիրը Բյուզանդիայից հրավիրեց վարպետներ՝ եկեղեցիների շինարարության համար, իսկ եկեղեցիներից մեկի կառուցումը հանձնարարեց Անաստաս Կորսունացուն[25]։ Այդ մասին տեղեկություն կա նաև «Повесть временных лет» ժողովածուի էջերում տեղ գտած 6497 (989) թ. նշված գրառման մեջ. «Այնուհետև ապրում էր Վլադիմիրը քրիստոնեական օրենքի ներքո ու մտադրվեց կառուցել Սուրբ Աստվածածնի եկեղեցի, և ուղարկեց Հունաստանից վարպետներ բերելու։ Եվ սկսեց կառուցել, իսկ երբ ավարտեց շինարարությունը, զարդարեց սրբապատկերներով ու հանձնեց Անաստաս Կորսունացուն ու ծառայության դրեց այնտեղ Կորսունի վանականներին»[26]։

Այսպիսին են Ռուսիայում քրիստոնեության ընդունման պատմական իրադարձության և դրանում քաղկեդոնական-հայերի մասնակցության հանգամանքները։ X դարի կեսերից Հին Ռուսիան դարձավ ապաստարան նաև այն հայերի համար, որոնք իրենց ազգային դավանանքի հետևորդներն էին և օտարերկրյա զավթիչների ներխուժման հետևանքով գաղթում էին Հայաստանից, հիմնում էին այստեղ բնակավայրեր, որոնց վիճակված էր դառնալ նրանց երկրորդ հայրենիքը։

Սկիզբ առան ռուս-հայկական քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ հարաբերությունները, երկու ժողովուրդների մերձեցումն ու նրանց բարեկամությունն ու եղբայրությունը, որի հետևանքը եղավ՝ 1828 թ. Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ։

---

22 Ստեփաննոս Տարոնեցի, էջ 276—277։

23 ПВЛ, ч. I, с. 276.

24 Н. М. Никольский. История русской церкви, с. 23.

25 Полное собрание русских летописей. Т. 4. Пг., 1915.

26 ПВЛ, ч. I, с. 282.